ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 Թ. ՀՈՒՆԻՍԻ 10-ԻՑ 14-Ը ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ (Ք. ԲՐՅՈՒՍԵԼ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Ասատուր Վարդանյան, ՀՀ ՏԿԵՆ նախարարի տեղակալ

2. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

   Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել), 2025 թվականի հունիսի 10-ից 14-ը

3. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ**

   International Solar Alliance (ISA) կազմակերպություն, ՄԱԿ-ի Միջազգային Էներգետիկ Գործակալություն (IEA)

4. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   International Solar Alliance (ISA) - տարածել արևային էներգիայի կիրառումը, խորացնել միջազգային համագործակցությունը և ապահովել մաքուր ու կայուն էներգիայի հասանելիություն՝ կլիմայական մարտահրավերներին արդյունավետ արձագանքելու համար: *ՄԱԿ-ի Միջազգային Էներգետիկ Գործակալություն (IEA)* - խթանել գլոբալ մակարդակով էներգաարդյունավետության բարձրացումը՝ նպաստելով էներգախնայողության քաղաքականության ամրապնդմանը, ներդրումների ավելացմանը և պետությունների միջև համագործակցությանը՝ կայուն և ապահով էներգետիկ ապագայի համար::

5. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ՝**

   ISA և IEA նիստերի ընթացքում անցկացվեցին մի շարք բարձր մակարդակի քննարկումներ, որոնց ժամանակ անդամ պետությունները հնարավորություն ունեցան ներկայացնելու իրենց ազգային առաջընթացը վերականգնվող էներգիայի, հատկապես՝ արևային տեխնոլոգիաների և էներգաարդյունավետության ոլորտում: Հայաստանի անունից ներկայացված ելույթներում բարձրաձայնվեցին երկրի էներգետիկ ոլորտում արձանագրված ձեռքբերումները:

   Քննարկվեցին նաև էներգաարդյունավետության ոլորտում փորձի փոխանակման, ֆինանսավորման նոր մեխանիզմների ստեղծման, քաղաքականության

կատարելագործման և թվայնացման ուղղվածությամբ կարիքները: Հայաստանի ներկայությունը նաև ընդգծեց երկրի պատրաստակամությունն ու մղվածությունը՝ դառնալու տարածաշրջանային ակտիվ մասնակից՝ վերականգնվող էներգիայի ոլորտում:

6. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

ISA-ի և IEA-ի շրջանակներում ելույթի ընթացքում ընդգծվել է Հայաստանի հանձնառությունը ՄԱԿ-ի Կայուն զարգացման 2030 օրակարգին՝ հատկապես Թիրախ 7-ին՝ «մաքուր, մատչելի, կայուն և ժամանակակից էներգիա բոլորի համար» սկզբունքին: Ելույթում նշվել է, որ Հայաստանը շարունակում է իրականացնել մինչև 2040 թվականը գործող էներգետիկայի զարգացման ռազմավարական ծրագիրը, ինչպես նաև 2022–2030 թվականների էներգախնայողության և վերականգնվող էներգիայի պետական ծրագիրը: Մանրամասն ներկայացվում են արդեն իրականացված նախագծերը:

Շեշտադրվել է նաև էներգիայի պահեստավորման ոլորտում ձեռնարկված քայլերը, մասնավորապես՝ 1200 ՄՎտ հզորությամբ պահեստավորման կայանի մշակումը՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ: Որպես ապագայի հեռանկար՝ ներկայացվում է կանաչ ջրածնի զարգացման հնարավորությունների ուսումնասիրությունը՝ ներքին

Ներկայացվել է էներգաարդյունավետության ոլորտում տարվող օրենսդրական աշխատանքների ընթացքը: Մասնավորապես՝ ընդունվել են մի շարք կարգավորումներ՝ բազմաբնակարան և հանրային շենքերում էներգաարդյունավետության ապահովման, նախագծային չափանիշների, վարկավորման աջակցության մեխանիզմների ձևավորման ուղղությամբ: Ներկայացվել է պետական աջակցության ծրագիրը, որի շրջանակում ավելի քան 29,000 շահառուներ ստացել են արտոնյալ վարկեր բնակարանների էներգաարդյունավետ վերանորոգման նպատակով:

Գործուղման ընթացքում առանձին հանդիպում եմ ունեցել Արևային էներգիայի միջազգային դաշինքի (ISA) գործադիր տնօրեն պարոն Աշիշ Խաննայի (Mr. Ashish Khanna) հետ: Քննարկման ընթացքում անդրադարձանք Հայաստանի մասնակցությանը ISA նախաձեռնություններին՝ մասնավորապես արևային տեխնոլոգիաների մասշտաբային ներդրման, էներգետիկ ենթակառուցվածքների արդիականացման և կադրային կարողությունների զարգացման ուղղություններով: Պարոն Խաննան ընդգծեց Հայաստանի

առաջընթացը արևային էներգիայի ոլորտում և արտահայտեց իր պատրաստակամությունը՝ աջակցելու Հայաստանի հետագա նախաձեռնություններին՝ հատկապես տեխնոլոգիական խորհրդատվության, ֆինանսավորման մոդելների ներդրման և տարածաշրջանային համագործակցության ձևավորման առումներով:

Քննարկում եմ ունեցել նաև Միջազգային Էներգիայի Խարտիայի ժամանակավոր գլխավոր քարտուղար Տիկին Ացուկո Հիրոսեի (Ms. Atsuko Hirose) հետ: Քննարկման ընթացքում անդրադարձանք վերականգնվող էներգիայի ոլորտում միջազգային համագործակցության խորացման հնարավորություններին, Հայաստանի փորձին՝ արևային էներգիայի զարգացման ուղղությամբ, ինչպես նաև էներգիայի պահեստավորման և կանաչ ջրածնի նախագծերում գործընկերության խորացման հեռանկարներին: Տիկին Հիրոսեն ողջունեց Հայաստանի կողմից իրականացվող քայլերը՝ ուղղված կայուն էներգետիկ համակարգի ձևավորմանը:

7. **<u>ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ</u>**

Հայաստանի անունից վերահաստատվեց ՀՀ կառավարության պատրաստակամությունը՝ մասնակցելու դաշինքի նախաձեռնություններին՝ ներառյալ՝ փորձագիտական աջակցություն, տեխնոլոգիաների կիրառման փորձարկում և տարածաշրջանային մասնագիտական ներուժի զարգացում: Պայմանավորվածություն ձեռք բերվեց ակտիվորեն ներգրավվել ISA-ի փորձի փոխանակման հարթակներում և օգտվել տեխնիկական ու ինստիտուցիոնալ աջակցության ծրագրերից:

8. **<u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ՝ ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</u>**

Հանդիպումների ընթացքում Հայաստանի կողմից արվեցին մի շարք առաջարկություններ, որոնք ուղղված էին վերականգնվող էներգիայի, հատկապես արևային տեխնոլոգիաների կիրառման ընդլայնմանը, տեխնոլոգիական համագործակցության ամրապնդմանը և կադրային կարողությունների զարգացմանը:

Հանդիպման արդյունքում որոշվեց ISA-ի միջոցներով Հայաստանի Հանրապետությունում ստեղծել առաջին վերապատրաստման կենտրոնը՝ վերականգնվող էներգիայի և արևային տեխնոլոգիաների ոլորտում մասնագետների կրթման ու վերապատրաստման նպատակով: Որոշվեց առաջիկա մեկ ամսվա ընթացքում համաձայնեցնել քայլերի հաջորդականությունը՝ նշված կետրոնի ստեղծման նպատակով: Այս քայլն ուղղված է տարածաշրջանային մարդկային ներուժի ձևավորմանը և մասնագիտական կրթության ամրապնդմանը:

Բացի վերոնշյալից, ստացել եմ նաև հրավեր մասնակցելու Արևային էներգիայի միջազգային դաշինքի (ISA) առաջիկա նախարարական մակարդակով վեհաժողովին, որը կկայանա 2025 թվականի հոկտեմբերի 27-30-ը՝ Հնդկաստանի մայրաքաղաք Նյու Դելիհում: Պաշտոնական հրավերի մանրամասներն իրենց կողմից առաջիկայում կներկայացվի:

<u>ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ</u>

18.06.2025թ.

Recoverable Signature

X

ԱՍԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN ASATUR 2308910957